

էկաւ Դաւթի առէջ—Յուդա կոիւ պղի էնինք:

Դաւիթ վերցուց թէ—Իմ հետ ոչուշաղ կայ, իմ ոչուշաղ տանիմ, հասում ուր տեղ ու ետ դառնամ գամ, քու հետ կոիւ էնիմ:

Տարաւ Խանդուլթ խանուժին հասուց ուր տեղ իրկուն մտաւ մըջ տեղին, քնաւ. մնաց յարի լուսուն, լուսուն հեծաւ ուր ձին ու էկաւ Չմկեր սուլթանի քաւշան, որ պղի կոիւ էնէր:

Էկաւ, տեսաւ, որ խոշուն հոն չէր. որ խոշուն հոն չէր, ձիուց իջաւ, ձին թորկեց մէկ տեղ ջրի վրէն ու յինք շորեր հանեց, որ լողկնայ ու ուրին թալեց մըջ ջրին. ինք որ լողկնալու հետն էր, էդ ջրի պուռկ խամբըջը էր, զարկին մըջըսով ուրին¹⁾:

Բոռաց Դաւիթ, ձէն գնաց Սասուն:

Քեռի-Թորոսիկ, Փոքրիկ-Ճնճղիկ, Յռան-Վէգոն, Խոր-Մանուկ, Չինով-Յովան²⁾ բիրադի քոման ու էկան էդ տեղ կայնան:

Ու ըսեցին.—Դաւիթ, էդ ո՞ր զարկեց քըլի:

Ըսեց.—Չըմ գինայ, որ զարկեց, խամբըներու միջէն մէկ էլաւ ու զարկեց:

Գացին խամբըներու մէջ գացին, գտան, տեսան Դաւիթն որ բռռացեր էր, մեռեր էր ահո: Էդ ախչիկ Չմկեր սուլթանի ախչիկն էր:

¹⁾ Ա. վարիանտով Դաւիթ փախչում է պատերազմից, որովհետեւ չէր կարողանում կուռել, խլածցոց երդուելիս պատահամամբ ձեռքը «համայլի» (նորա ծոցում համայիլ և սանր կար) վերայ դնելու պատճառով: Նա կամենում է անցնել կամուրջով, բայց իմաստուն ձին չի անցնում (սիրողի ախչիկ կարմընջի տակն էր): Դաւիթ ձին գետի միջով քշում է, ձին խրուում է ցետի մէջ և իւր շորերն էլ ցետտուում է. մինչդեռ, ձիուց իջնելով, մաքրում էր իւր «խապուտը», սիրողի աղջիկը նետ ու անեղով սպանում է Դաւիթին:

²⁾ Ա. վարիանտով Դաւիթին օգնութեան են գնում Քեռի-Թորոս, Յռան-Վէգոն, Ճնճղիկ-Փոքրիկ, Չինով-Յովան, Ճոռ-Վիրապ, Խոր-Վիրապ, Խողբագին (°):